

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ

## 23 ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ՆԵՐՈ

**Հ**այաստանի գիտութիւններու ակադեմիան - , որ 1943-ի նոյեմբերին դարձաւ Ինքնուրոյն , մինչ նախապէս իբրեւ ենթակարգեալ կախում ունէր Ընդհ. Սովետական Միութեան Ակադեմիայէն - , կը հաշուէ այսօր որպէս հիմնադիր անդամ՝ 23 ակադեմականներ , ընտրուած գիտնականներու համախմբումներու մէջ և հաստատուած կառավարութիւնէն :

Նպատակն է կեդրոնացնել և գիտական ղեկավարութիւն տալ Հայկական Գրական-Գիտական Հաստատութիւններու մէջ կատարուած հետազոտական աշխատանքներուն : Այդ ակադեմականները կոչուած , « իսկական անդամներ Գիտ. Ակադեմիայի » , են հետեւեալները , որոնց մասին կու տանք հոս համառօտ տեղեկութիւններ՝ որքան որ կարելի եղաւ հաւաքել մեզի :

### 1. - ԱԲԵՂԵԱՆ ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Արժանացած ակադեմիկոսի աստիճանին հասարակական գիտութիւններու (պատմութիւն , գրականութիւն , լեզու) գծով : Հին սերունդէն է , նուիրուած ամբողջապէս հայ գրականութեան ուսումնասիրութեան , անխոնջ աշխատող և արտադրող : Իր բազմաթիւ գործերէն յիշենք « Հայ ժողովրդական առասպելներ Մ. Խորենացու երկերի մէջ » , « Հայոց լեզուի տեսութիւն » , « Հին գուսանական ժողովրդական երգեր » , « Հայոց լեզուի տաղաչափութիւնը » , « Սասմայ ծուր » , « Հայրէններ » քննական հրատարակութիւն միջնադարեան ժողովրդական տաղասացներու գործերուն , « Հայոց լեզուի ուղղագրութիւնը » , « Գէորգ Գ. մեծագործ

կաթողիկոս » , « Հազար ու մի խող՝ ժողովրդական երգարան » : Մեռաւ 1944 Սեպտեմբեր 25-ին Երեւանի մէջ :

### 2. - ԱԼԻԽԱՆԵԱՆ ԱՐԲԱՅԱՄ ԻՍԱՀԱԿԻ

### 3. - ԱԼԻԽԱՆԵԱՆ ԱՐՏԵՄ ԻՍԱՀԱԿԻ

Երկու երիտասարդ գիտնական եղբայրներ , ուսած Լենինկրատի Համալսարանին մէջ , արտակարգ ընդունակութեան և կարողութեան տէր բնարանական ու մաթեմատիքական գիտութիւններու մէջ : Արժանացած են ակադեմիանի կոչումին այն մեծ ծառայութեան համար՝ զոր բերած են ի նպաստ Հայաստանի բնագիտական զարգացումին : Անուանի են նաեւ Ընդհ. Սով. Միութեան մէջ : Արագածի լանջքերուն վրայ ունին գիտակայարան մը ուսումնասիրելու համար արեւու տիեզերական ճառագայթներու շարժման օրէնքները . այս գիտակայանը անընդհատ աշխատութեան մէջ է տարւոյն բոլոր եղանակներուն :

Հրատարակած են բազմաթիւ գիտական գործեր , մանաւանդ յօդուածներ Ակադեմիայի Գիտական Տեղեկագիրներուն մէջ , հաղորդելով իրենց քննութիւններուն արդիւնքը :

### 4. - ԱՃԱՌԵԱՆ ՀՐԱՉԱՅ ՅԱԿՈՒԻ

Նշանաւոր լեզուագէտ , հոյագէտ և բանասէր . հասարակական գիտութիւններու գծով արժանացած Ակադեմիանի տիտղոսին :

Հին սերունդին պատկանող՝ աշակերտ Մէյէի , լեզուագիտական խոր զարգացում ստացած Եւրոպական կեդրոններու մէջ և

մանաւանդ Սորպոնի Համալսարանը: Կերկայիս կը դասախօսէ հայկական լեզուագիտութիւն Երեւանի Համալսարանին մէջ: Իր հանրածանօթ բազմաթիւ հրատարակութիւններէն յիշենք « Արմատական Բառարան »ը բաղկացած վեց հատորներէ, « Գաւառական բառարան », « Classifications des dialectes arméniens » որուն յետոյ հայերէն ընդարձակ թարգմանութիւնը տուաւ « Հայ բարբառագիտութիւն ատկորոշիչ », « Աւսումնասիրութիւններ Հայկական բարբառախօսութեան », « Թուրքերէնից փոխառեալ բառեր », « Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ », « Les explosives de l'ancien arménien, étudiées dans les dialectes modernes », « Յուցակ ձեռագրաց Սանասարեան Վարժարանի ի կարին », « Յուցակ Ձեռագրաց Թաւրիզի, « Եոր-Բայազէտի », « Ս. Մեսրոպի և գրերու գիւտի պատմութեան աղբիւրներն ու անոնց քննութիւնը », « Քննութիւն և համեմատութիւն Էդնկայ նորագիւտ ձեռագրին » աշխատակցութեամբ Գ. Տ. Մկրտչեանի, « Հայոց նոր վկաներ » (աշխատակցութեամբ Յ. Մանանդեանի): Վերջին շրջանին արտադրած է « Հայոց անձնանունների բառարան » (հինգ հատոր, տպագրուած են երկու հատորները), « Հայոց լեզուի պատմութիւնը »: Կերկայիս ունի ձեռքին տակ պատրաստութեան մէջ՝ « Լիակատար քերականութիւն հայ լեզուի » որ քննական փրիսոփայական վերլուծումն է հայ և ընդհ. քերականութեանց, համեմատական տեսութիւններով հայ և օտար լեզուներու:

Աճառեան հայ լեզուի ամէնէն մեծ մշակներէն մին է, որուն համար իր Աւսուցիչը Մէյէ ըսած է պարծանքով. « Je suis fier d'avoir eu autrefois M. Adjarian au nombre de mes élèves pendant de longues années: il est de ceux qui font l'honneur à l'école par où ils ont passé ». — « Հպարտ եմ ժամանակին ունեցած ըլլալուս Պր. Աճառեանը երկար

տարիներ աշակերտներուս թուն մէջ. նա անոնցմէ է՝ որ պատիւ կը բերեն այն դպրոցին ուսկից անցած են »:

**5. - ԲՈՒՆԻԱԹԵԱՆ ՀՐԱՉԵԱՅ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ**

Երիտասարդ գիտնական կենսաբանական մասնաճիւղին, ուսած է Երեւանի « Մոլթի » անուան պետական Համալսարանին մէջ, որուն այսօր վարիչ-անօրէնն է և դասախօս կենսաբանութեան:

Ունի բազմաթիւ յօդուածներ և հրատարակութիւններ Սով. Հայաստանի Ակադ. Գիտական Տեղեկագիրներու մէջ:

**6. - ԳՈՒԼՔԱՆԵԱՆ ՎԱՐԴԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ**

Նմանապէս կենսաբանական մասնաճիւղին մէջ երիտասարդ գիտնական, որ շնորհիւ իր կատարած հետազոտութիւններուն, մեծ մղում է տուած այդ գիտութեան Հայաստանի մէջ: Կերկայիս կը վարէ Ակադեմիայի գիտնական Քարտուղարի պաշտօնը. և միանգամայն կը դասախօսէ պետական Համալսարանին մէջ:

Հրատարակած է բազմաթիւ ուսումնասիրական յօդուածներ Ակադ. Գիտական Տեղեկագիրներու մէջ:

**7. - ԵՂԻԱԶԱՐՈՎ ԻԻԱՆ ՎԱՍԻԼԻ**

Ֆիզիքո-մաթեմատիքական և բնագիտական գիտութիւններու գծով արժանացած Ակադեմականի կոչումին: Ընդհանուր գիտնական մըն է այդ ճիւղին մէջ բովանդակ Սով. Միութեան ժողովուրդներու քով, աշխատած է Սով. Միութեան զանազան կեդրոններուն մէջ և այժմ վերջնականապէս փոխադրուած է Հայաստան. իր ղեկավարութեամբ կ'աճի և կը զարգանայ նոր սերունդը նոյն մասնաճիւղին մէջ: Կը դասախօսէ Երեւանի գիտական Հաստատութիւններուն մէջ: Վարած է նաեւ քաղաքական պաշտօններ. ներկայիս Սով. Միութեան Գերագոյն խորհուրդին երեսփոխաններէն

է: Հրատարակութիւններ ունի Ակադ. Գիտական Տեղեկագիրներուն մէջ:

**8. - ԹԱՄԱՄՇԻ ԱՂԵՔՍԱՆԴԻ ԶԱՔԱՐԻ**

Ստացած ակադեմականի տիտղոս՝ գիւղատնտեսական գիտութիւններու գծով: Ուսումնասիրած է, լուրջ հիմերու վրայ գնելու համար, հայ գիւղերու արտաբերական վիճակը, ունի գիտական հետազոտութիւններ, գրաւոր աշխատութիւններ այս ուղղութեամբ, որոնց արձագանգը կը գտնուի Ակադ. Գիտ. Տեղեկագիրներուն մէջ:

**9. - ԹՈՒՄԱՆԵԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԳԱԼՈՒՍՏԻ**

Ստացած ակադեմականի տիտղոս նմանապէս գիւղատնտեսական գիտութիւններու գծով: Երկարամեայ և գործնական աշխատանք թափած է Հայաստանի հողամշակութեան արուեստի բարւոքման և գիւղատնտեսական գիտութիւններու զարգացման համար: Արժեքաւոր են իր կատարած գիւտերը Հայաստանի ցորենին յատուկ տեսակներու յայտնաբերման տեսակէտով: Կը դասախօսէ գիւղատնտեսական Հաստատութեան մէջ: Հրատարակութիւնները՝ զեկոյցներու ձևով կը գտնուին Ակադ. Գիտական Տեղեկագիրներու մէջ:

**10. - ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ՎԱՉԷ ԻՒԱՆԻ**

Բնաբանական-մաթեմատիքական գիտութիւններու գծով եղած Ակադեմական. իր լայն բաժինը ունի Հայաստանի բնաբանական գիտութիւններու զարգացման մէջ:

**11. - ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱԻԵՏԻՍ**

Հասարակական գիտութիւններու գծով արժանացած ակադեմականի տիտղոսին: Հայաստանի «մեծ բանաստեղծը», խրախուսիչ և քաջալեր քերթողը նորահաս սերունդին, սիրուած ժողովուրդէն՝ որուն ոգին է ան, ողջունուած միշտ խանգալառօրէն ժողովրդական բոլոր համախմբումներու առ-

թիւ: Յայտնի են իր գործերը, որոնցմէ յիշենք Երգեր ու վերքեր, Հայրենի աղբիւրից, Արուշաք Մանարի, Անան ժողովներ, Սասնա Մհեր, եւայլն, որուն վերջին մասը լրացուց Սով. Հայաստանի մէջ, Ռուսա Կարօ ընդարձակ վէպը՝ տակաւին անաւարտ, զոր վերջացնելու կ'աշխատի ներկայիս:

**12. - ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՍԱՀԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ**

Գիւղատնտեսական գիտութիւններու գծով արժանացած ակադեմականի տիտղոսին. ունի բազմաթիւ գիտական հետազոտութիւններ հողամշակութեան և բերքերու աճումի մասին. մեծ զեր կատարած է Հայաստանի գիւղատնտեսական ընդհանուր կազմակերպութեան մէջ: Սովետական Միութեան Գերագոյն խորհուրդին մէջ երեսփոխան է, և արտաքին Գործոց Նախարարը Հայաստանի:

**13. - ԿՈՇՏՈՅԵԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԵՂՐԱԿԻ**

Բնական գիտութիւններու գծով անուանուած ակադեմական: Սով. Միութեան Գիտութիւնների Ակադեմիայի թղթակիցանդամ է. կը դասախօսէ Մոսկուայի Բարձրագոյն Ուսումն. Հաստատութիւններուն մէջ: Ճանչցուած գիտնական է ամբողջ Սով. Միութեան մէջ. ճամբորդած է Եւրոպա. իր գրուածքները թարգմանուած են սուսերէնի և եւրոպական լեզուներու:

**14. - ՅԱԿՈԲԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴԻ ԱՐԿԱԴԻԻ**

Բնաբանական ու մաթեմատիքական գիտութիւններու գծով անուանուած է ակադեմական: Նշանաւոր ուսուցչապետ է իր մասնաճիւղին. ունի բազմամեայ փորձ և լայն հմտութիւն. կը դասախօսէ բազմաբուհատեան Հաստատութեան մէջ և կը զեկալարէ գիտական աշխատողներու խումբը: Ունի հրատարակուած գործեր և քաջամտիւ յօդուածներ Ակադեմիայի Գիտական Տեղեկագիրներու մէջ:

15. - ՀԱՄԲՈՐՉՈՒՄԵԱՆ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ

Բնարանական ու մաթեմաթիքական գիտություններու գծով անուանուած ակադեմական, Սովետական Միութեան Գիտություններու Ակադեմիայի թղթակից-անդամ է, և Փոխ-Նախագահ Հայաստանի Գիտություններու Ակադեմիային: Մասնագէտ է աստղարաշխութեան և այդ մարզին մէջ կատարած է զիւտեր, գլխաւորապէս արեւուճառագայթներուն տիեզերական տարածութեան մէջ ունեցած շարժման օրէնքներուն վերաբերեալ, որուն համար ստացած է 1944-ին Սթալինեան մրցանակ: Այս տարի ամառը մասնակցած է Լանտարայի աստղարաշխական միջազգային նիստին:

16. - ՂԱՓԱՆՑԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶԻ

Ակադեմական անուանուած հասարակական գիտություններու գծով քաջ մասնագէտ է լեզուաբանութեան և ազգային մատենագրութեան: Սորված է լեզուներ Ակադ. Ն. Մառի առաջնորդութեամբ Լենինկրատի մէջ: Գրած է բազմաթիւ ուսումնասիրութիւններ հայ լեզուի, հայկ. դիցաբանութեան վրայ, ինչպէս «Արա գեղեցիկի պաշտամունքը» զոր ստացանք վերջերս Հայաստանէն, «Նոր Բայազիտի սեպագիր արձանագրութիւնը», «Հնարանական մի քանի մնացորդներ հայերէնում» եւ այլն: Լեզուագիտութեան դասախօս է Հայաստանի Պետական Համալսարանի Գրականութեան բաժնին և Մանկավարժական Հաստատութեան մէջ: Նախագահն է համալսարանի կից՝ Ն. Մառի անուան գիտական աշխատանոցին, որուն նպատակն է ուսումնասիրել և ծանօթացնել այդ մեծ գիտնական հայագէտին թողած գրական ժառանգութիւնը:

17 - ՄԱՆԱՆԴԵԱՆ ՅԱԿՈԲ ՀԱՄԱԶԱՍՊԻ

Հասարակական գիտություններու գծով ստացած ակադեմականի տիտղոսը. նշանաւոր պատմաբան և բանասէր, արդէն ծանօթ

դէմք նախասովետական շրջանին: Իր առաջին աշխատութիւններէն յիշենք «Գաւիթանյաղթի խնդիրը» (հրատ. Արարատ-ի մէջ 1904-ին) «Քաղուածքներ Եւս. Կեսարացոյ Քրոնիկոնից մի հին ձեռագրում (հրատ. Հանդ. Ամս. 1905): Սովետական շրջանին կը պատկանին «Շինանիւթերի յատկութիւնները», «Կշիռները և չափերը հնագոյն հայ աղբիւրներում», «Հայաստանի պատմութիւնը թուրք-թաթարական արշաւանքների շրջանին», «Խորենացու առեղծուածին լուծումը», «Հայաստանի գլխաւոր ճանապարհները», «Մանր հետազոտութիւններ», «Գիտողութիւններ հին Հայաստանի շինականների գրութեան մասին Մարզպանութեան շրջանում»: Վերջին տարիներու գործ է «Տիգրան մեծ»ը, հրատարակուած հայ և ռուս լեզուներով, «Քննական տեսութիւն Հայ Ժողովրդի պատմութեան», որուն դեռ Ա. հատորը լոյս տեսած է: Երկար տարիներ դասախօսած է Հայաստանի Պետական Համալսարանին պատմական մասնաճիւղի բաժնին մէջ: Իսկական Անդամ է նաեւ ՍՍՌՄ Գիտություններու Ակադեմիային:

18. - ՄԱԼԽԱՍԵԱՆ ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳԻՍԻ

Նոյնպէս հասարակական գիտություններու գծով անուանուած ակադեմական, նշանաւոր լեզուագէտ և բանասէր. նախասովետական շրջանին արդէն ծանօթ դէմք իր «Ղազար Փարպեցի»ի հրատարակութեամբ, «Փ. Բիւզանդացոյ պատմութեան» ուսումնասիրութեամբ, հայ լեզուի մասին ըրած իր քերականական աշխատութիւններով «Գրաբարի հորվումը, խոնարհումը և նախագրութիւնները», «Գրաբարի համաձայնութիւն», «Մարդ եմ» Գ. Էրբոս գերմանացի վիպասանին վէպին թարգմանութեամբ, եւ այլն: Սովետական շրջանին կատարած արտագրութիւններէն յիշենք «Ամիրտովլաթի» գիտական հրատարակութիւնը, «Սէրէոս Լյպ.ի պատմութեան»

հրատարակութիւնը, աշխարհարարի վերածում Մովս. Խորենացիի պատմութեան, և մանաւանդ « Հայերէն բացատրական բառարանը » չորս հատոր, որուն համար ստացած է Սթալինեան մրցանակ՝ պարգեւատրուելով 100 հազար ռուպլիով: Իր գործերուն մէջ ամէնէն թանկագինը նկատուած է այս դժուարին և տքնաջան աշխատութիւնը, որուն համար 1921-էն ի վեր հեղինակը նուիրուած է բացառապէս՝ հրատարելով ուսուցչական ասպարէզէն: Սով. Հայաստանի կառավարութիւնը 1922-ին համաձայնութեան կու գայ հեղինակին հետ՝ ապահովելով անոր ապրուստը: 1935-ին, 14 տարի վերջ լրացնելով իր գործը կը յանձնէ Պետհրատին: 1942-ին լոյս կը տեսնէ Ա. հատորը ընտիր թուղթի վրայ և հին ուղղագրութեամբ:

**19. - ՊԱՅՅԵՆԳՈՒՑ ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՆԻԿՈՒՅԵՒԻԶ**

Բնարանական-մաթեմատիքական գիտութիւններու գծով ստացած ակադեմականի տիտղոսը: Ազգով ուսու, կը դասախօսէ Հայաստանի Պետական Հաստատութիւններու մէջ: Ունի հրատարակութիւններ Հայաստանի մասին:

**20. - ՏԵՐՏԵՐԵԱՆ ԱՐՍԵՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ**

Հասարակական գիտութիւններու գծով անուանուած ակադեմական, հմուտ ազգային գրականութեան, ուսուցչապետ Պետական Համալսարանի մէջ քսան տարիէ վեր: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրութիւններու նուիրուած արդի հայ գրականութեան զէմքերուն՝ Շանթի, Շիրվանզադէի, Վ. Տէրեանի, Մուրացանի, Աշիշանի, Թումանեանի, եւայլն, և ուսու գրող՝ Քրիստի և Բրիւսովի, եւայլն: Վերջերս լոյս տեսաւ իր « Հայ Կլասիկները » մեծահատոր աշխատութիւնը: Պարբերաբար կը հրատարա-

կուին միշտ իր գործերը Ակադ. Գիտական Տեղեկագիրներուն մէջ:

**21. - ՅՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՒՈՆ ԱՆԴՐԵԻ**

Ակադեմական անուանուած կենսաբանական գիտութիւններու գծով: Անուանի բժշկակապետ է, որ երկար տարիներէ ի վեր կը դասախօսէ բժշկական բարձրագոյն Հաստատութեան մէջ: Ուսումնասիրած է միջնագարեան հայ բժշկութեան պատմութիւնը, որու մասին գրած է մեծ աշխատութիւն մը հայ և ուս լեզուներով՝ վեր հանելով բազմաթիւ հայ բժիշկներու անուններ և անոնց գործունէութիւնը: Հրատարակած է Հմտալից ընդարձակ բժշկական դասագրքեր ուսանողութեան համար: Պարբերաբար կը կարգայ գեկուցումներ գիտական համախումբումներու առթիւ՝ իր կատարած քննութիւններու մասին:

**22. - ՕՐԲԵԼԻ ՅՈՎՍԵՓ ԱԲԳԱՐԻ**

Հասարակական գիտութիւններու գծով անուանուած ակադեմական: Իսկական անգամ է նաեւ ՍՍՈՄ. Գիտութիւններու Ակադեմիային, և նախագահ Հայկական Ակադեմիային, և միանգամայն տնօրէն Լենինկրատի Համաշխարհային « Լըմիթատ » թանգարանին: Նախ քան Սովետական Միութիւնը՝ եղած է Անիի պեղումներուն մասնակից Ակադ. Ն. Մառիի հետ միասին, ուսումնասիրած է Վանի գաւառին պատմական հնութիւնները, որոնց մասին ունի հրատարակուած յօդուածներ: Կատարած է եւս եւրոպական լեզուներով ուսումնասիրութիւններ՝ պարսկական և այլ արեւելեան ժողովուրդներու մշակոյթին վերաբերեալ: Հմուտ է բազմաթիւ լեզուներու՝ ուսներէնի, ֆրանսերէնի, գերմաներէնի, պարսկերէնի, վրացերէնի, քրդերէնի, քաջ գրաբարագետ է և մեծ հետադարձ Պարգեւատրուած է Լեւինեան և այլ շքանշաններով:

23. - ՕՐԲԵԼԻ ԼԵՒՈՆ ԱԲԳԱՐԻ

Եղբայրը նախորդին, անուանուած ակադեմական նմանապէս հասարակական գիտութիւններու գծով: Իսկական անգամ է ՍՍՈՒՄ. Գիտութիւններու Ակադեմիային, և կը վարէ անոր Փոստ-Նախագահի պաշտօնը: Մասնագէտ գիտնականի համբաւ կը վայելէ բնախօսութեան մէջ. իր առաջնորդութեան տակ բազմաթիւ գիտական աշխատողներ կը

պատրաստուին ամբողջ Սովետական Միութեան համար: Աշխատած է ժամանակին՝ համաշխարհային անուն ունեցող գիտնական Պաւլովի հետ, և ներկայիս անոր մահէն վերջ՝ կը ղեկավարէ բնախօսական Հաստատութեան աշխատութիւնները: Գործերը տպագրուած են եւրոպական լեզուներով՝ թէ՛ առանձին և թէ՛ պարբերաթերթերու մէջ:

Հ. Մ. ձ.

ՓՐՈՑ, Գ. ԱՐՈՎ՝ ՏԵՍՈՒՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌԱԳՐԱՅ

Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի Ն

Փրոց. Գ. Արով ծնած է Թիֆլիս 1897-ին. միջնակարգ վարժարանի ուսումները կատարած է և աւարտած Թիֆլիսի Ներսէսեան վարժարանին մէջ: 1922-1924 ի շրջանին կատարելագործած է իր զարգացումը Մոսկուայի Առաջին Պետական Համալսարանին մէջ: Աւելի ուշ 1931-1934 թուականներուն յաճախած է և աւարտած Մոսկուայի Ուսուցչապետութեան գիտական բարձր Հաստատութիւնը: Այնուհետեւ մասնակցած է Հայաստանի մէջ գիտական աշխատանքներու. ընտրուած է զանազան անգամներ գրական կազմակերպութեան պատասխանատու ղեկավար Քարտուղար 7-8 տարիներու ընթացքին: Հրատարակած է բանաստեղծութիւններ, պատմուածքներ առանձին գրքոյկներով և Սովետական գրեթէ բոլոր հայերէն թերթերուն մէջ: Վարած է վարչական պաշտօններ ալ, եղած է տեղակալ Լուսաւորութեան Նախարարին: Ներկայիս Հայ Չեռագրաց Մատենադարանին տեսուչն է:

Հայաստանի Համալսարաններուն և Պետական Ինստիտուտներու մէջ սկսած է դասախօսել 1930-էն ի վեր հին հայ դասա-

կան գրականութեան պատմութիւնը, գրագիտութիւն, բանաստեղծական արուեստն ու տաղաչափութիւնը, և ուսուցչականութեան պատմութիւնը:

Ակադ. Մանուկ Արեղեանի հետ միասին կազմած է «Ստուենցի Գաւիթ» ժողովրդական վէպին համահաւաք բնագիրը: Գրած է ուսումնասիրութիւն մը Սայեաթ-Նովայի կեանքին ու գործունէութեան մասին «Սիրոյ և արդարութեան մեծ երգիչը» տիտղոսի տակ: Ստացած է «Արուեստի վաստակաւոր գործիչ» ի տիտղոսը:

Հայրենական պատերազմի շրջանին՝ հրատարակած է իր բանաստեղծութիւններուն և պատմուածքներուն ժողովածուն, որոնց նիւթը կը կազմէ հայ ժողովուրդի պայքարը ֆաշականութեան դէմ:

Ներկայիս է, ղեկավարութեան տակ, վերջին հինգ վեց տարիներուն՝ ձեռագրական ուսումնասիրութիւնները, հրատարակութիւնները լայն ծաւալով սկսած են արդիւնաբերուիլ, և համախմբուած են գիտնական ուժեր՝ ծրագրուած աշխատութիւններ կատարելու համար: Ինքը միանգամայն է Չեռագրատան Գիտական-Խորհուրդին Նա-